Կ. Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ, «ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

Հայաստանում կուլտուրական շինարարության պատմությունը հայ ժողովրդի սոցիալիզմի ժամանակաշրջանի պատմության անրաժան մասն է կազմում։ Այն սերտորեն կապված է ժողովրդական տնտեսության վերականգնման, սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության կոոպերացման, սոցիալիստական հասարակարգի կառուցման համար ծավալած պայքարի, հայ ժողովրդի մշակույթի վերածնման և ծաղկման պրոցեսի հետ։

Հայ ժողովրդի սովետական շրջանի պատմության գիտական լուսաբանության ուղղությամբ զգալի աշխատանք է կատարվել։ Լույս են տեսել արդյունաբերության ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման, քաղաքաշինարարության, ժողովրդի կյանքում կատարված սոցիալական տեղաշարժերին նվիրված բազմաթիվ արժեքավոր մենագրություններ։ Ճիշտ լուսաբանություն են ստացել ՍՄԿՊ տեղական հնագույն ջոկատներից մեկի՝ Հայաստանի կոմկուսի ղեկավարությամբ նախապատերազմյան հնգամյակների տարիներին արդյունաբերության և գյուղատնտեսության ասպարեզում հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումները, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման ուղղությամբ կատարած աշխատանքը։ Բայց մինչև այժմ էլ հրապարակի վրա քիչ աշխատություններ կան սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի բաղկացուցիչ մասը կազմող կուլտուրական հեղափոխության, մասնավորապես Հայաստանում կատարված կուլտուրական շինարարության մասին։ Այդ բացը լրացնում է վերջերս լույս տեսած պատմական գիտությունների թեկնածու Կ. Ս. Խուդավերդյանի «Կուլտուրական հեղափոխությունը Հայաստանում»[1] մենագրությունը։ Հեղինակը, տարիներ շարունակ բարեխղճորեն ուսումնասիրելով արխիվային և հրապարակի վրա եղած նյութերը, բացահայտել է Սովետական Հայաստանում 1920—1940 թվականներին կատարված կուլտուրական շինարարության առանձնահատկությունները, ՍՍՌՄ-ում տեղի ունեցած կուլտուրական հեղափոխության ֆոնի վրա ցույց է տվել հայ ժողովրդի մշակութային վերածնունդն ու ծաղկումը։ Հանգամանորեն քննարկելով վերոհիշյալ պրոբլեմին նվիրված գրականությունը, պատշաճը տալով նրանց հեղինակներին (Աշ. Հովհաննիսյան, Ասք. Մռավյան, Դ. Տեր-Սիմոնյան, Վ. Համբարձումյան, Ա. Հակոբյան, Ծ. Աղայան, Գ. Ղարիբջանյան, Ա. Շահինյան, Ս. Խարմանդարյան, Ա. Մնացականյան, Լ. Ղարիբջանյան և ուրիշներ), Կ. Խուդավերդյանը իրավացի կերպով նշել է, որ այդ ամենը, թեև ուղղակի կերպով խնդիր չունենալով Հայաստանում տեղի ունեցած կուլտուրական հեղափոխության պատմությունը լուսաբանելու, բայց հայտնի չափով օգնել և աղբյուրագիտական հիմք են ծառայել սույն աշխատության համար։

[1] К. С. Худавердян, Культурная революция в Советской Армении. 1920—1940, изд. АН Арм ССР, 1966, 302 стр., ответ. редактор С. В. Хармандарян.

Հայաստանում կուլտուրական հեղափոխության հարցերը շոշափող գրականությունը հեղինակը բաժանել է երեք խմբի՝ 1. հայ ժողովրդի պատմությունը արտացոլող ընդհանուր ուսումնասիրություններ, 2. հայ ժողովրդի պատմության առանձին ժամանակահատվածներին նվիրված գործեր և 3. կուլտուրական շինարարությունը պատկերող աշխատություններ։

Հարկավոր է նշել, որ խնդրո առարկա պրոբլեմի վերաբերյալ Կ. Խուդավերդյանը անցյալում նույնպես հրապարակել է մի քանի ծավալուն ուսումնասիրություններ՝ այդ թվում՝ «Կուլտուրական շինարարությունը Հայաստանում առաջին հնգամյակի տարիներին» (Երևան, 1959), «Հին ժողովրդի նոր կուլտուրան» (Մոսկվա, 1962) և այլն։

Հայաստանում կուլտուրական հեղափոխության ուսումնասիրությունը բազմապլան պրոբլեմ է։ Այն ընդգրկում է ժողովրդական լուսավորության, անգրագիտության վերացման, բարձրագույն կրթության զարգացման, բնակչության մեջ կատարվող կուլտուր-լուսավորական, քաղաքական-մասսայական աշխատանքի, գիտության, գրականության, արվեստի զարգացման հարցերը։ Ինչ խոսք, որ դրանց ուսումնասիրությունը կարելի է կատարել առանձին-առանձին։ Սակայն կուլտուրական հեղափոխության ամբողջական պատմության գիտական լուսաբանման համար հարկավոր է այդ բոլորը միացյալ, կոմպլեքսային ձևով հետազոտել և շարադրել։ Մի բան, որ հաջողվել է Կ. Խուդավերդյանին։

Գրախոսվող աշխատությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից (Հոկտեմբերյան հեղափոխությունը և հայկական կուլտուրան, կուլտուրական հեղափոխության սկիզբը Սովետական Հայաստանում, կուլտուրական, հեղափոխության վճռական հաջողությունները Սովետական Հայաստանում) և եզրափակումից։ Գրքի վերջում տրված է ամփոփում՝ անգլերեն լեզվով, գրականության և աղբյուրների մատենագիտություն, անվանական ցանկ։

Կ. Խուդավերդյանը, հենվելով սովետական պատմագիտության նվաճումների, մասնավորապես Պ. Կիմի, Գ. Կարպովի, Ի. Սմիրնովի, Մ. Իովչուկի և այլոց գործերի վրա, ղեկավարվելով ՍՄԿՊ ծրագրի դրույթներով, առաջին անգամ մշակել է Սովետական Հայաստանում կուլտուրական հեղափոխության գիտական պարբերացումը և ըստ այնմ էլ շարադրել նյութը։ Ինչպես ՍՍՌՄ-ում, այնպես էլ Սովետական Հայաստանում, կուլտուրական մեծ հեղափոխությունը չի ավարտված։ Այն բաժանվում է երկու էտապի՝ սոցիալիստական և կոմունիստական։ Առաջին էտապը, որի խնդիրն էր՝ ապահովել աշխատավոր զանգվածների կուլտուրական վերելքը, սոցիալիստական կուլտուրայի ստեղծումն ու դեմոկրատացումը իրագործված է։ ՍՄԿՊ ծրագրում այդ առթիվ ասված է. «Սոցիալիզմի կառուցումը պահանջում էր բարձրացնել ժողովրդական ամենալայն մասսաների կուլտուրան։ Այդ խնդիրը նույնպես հաջողությամբ լուծվեց։ Երկրում իրագործվեց կուլտուրական հեղափոխություն։ Այդ հեղափոխությունը աշխատավոր մասսաներին դուրս բերեց հոգևոր ստրկությունից ու խավարից, նրանց հաղորդակից դարձրեց մարդկության կուտակած կուլտուրայի հարստություններին։ Այն երկիրը, որի բնակչության մեծամասնությունը անգրագետ էր, հսկայական թռիչք գործեց դեպի գիտության ու կուլտուրայի գագաթները»[2]։

2 Սովետական Միության կոմունիստական պարտիայի ծրագիրը, Հայաստան, 1961, էջ 14—15։

Երկրորդ էտապը, որի խնդիրն է՝ կոմունիզմի հաղթանակի համար բոլոր անհրաժեշտ կուլտուրական և գաղափարական պայմանների ստեղծումը, շարունակվում է։

Գրախոսվող աշխատությունը ընդգրկում է Սովետական Հայաստանում կուլտուրական հեղափոխության սոցիալիստական էտապի պատմությունը։ Հեղինակը, Հայաստանում կուլտուրական հեղափոխության առաջին էտապը նույնպես պարբերացման է ենթարկում, առաջին շրջանը կոչելով՝ կուլտուրական հեղափոխության սկիզբը, որը ընդգրկում է Հայաստանում սովետական կարգերի հաստատումից (նոյեմբեր, 1920 թ.) մինչև 1930-ական թվականների սկիզբը, երկրորդ շրջանը՝ կուլտուրական հեղափոխության վճռական հաջողությունները, 1930-ականից մինչև 1940-ական թվականները։

Հայաստանում կուլտուրական հեղափոխությունը արդյունավորել է ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, մեծապես նպաստել տնտեսական-քաղաքական խնդիրների լուծմանը, սոցիալիզմի կառուցմանը։

Կ. Խուդավերդյանը, հավատարիմ պատմականությանը, միանգամայն ճիշտ ելակետ է ունեցել, իր աշխատության առաջին գլխում քննարկելով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո, 1918—1920 թվականներին, հայկական գործերի կոմիսարիատի կուլտուր-լուսավորական աշխատանքը Ռուսաստանի հայաշատ վայրերի բնակչության և մասնավորապես հայ փախստականների (գաղթականության) շրջանում։ Հայկական գործերի կոմիսարիատի, Լազարյան ճեմարանի, բոլշևիկյան հայերեն թերթերի և գրականության հրատարակման վերաբերյալ սովետական իշխանության լենինյան առաջին դեկրետներն ու որոշումները գաղափարական նախադրյալներ ստեղծեցին 1920 թ. նոյեմբերից հետո Հայաստանում ծավալված կուլտուրական շինարարության համար։ Պատշաճ լուսաբանություն է ստացել հայկական գործերի կոմիսարիատի, նրա տպագիր օրգանների, աշխատողների, առանձնապես Վ. Ավանեսովի (Ս. Մարտիրոսյան), Վ. Տերյանի, Աշ. Հովհաննիսյանի, Պ. Մակինցյանի, Ա. Կարինյանի, Բ. Բորյանի, Հ. Հովսեփյանի, Ս. Լուկաշինի (Ս. Սրապիոնյանի) և այլոց գործունեությունը Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարները պրոպագանդելու, հայ աշխատավոր զանգվածների շրջանում կուլտուր-լուսավորական աշխատանք կազմակերպելու ուղղությամբ։

«Սովետական Հայաստանում կուլտուրական հեղափոխության սկիզբը» գլխում պատկերված է ժողովրդական կրթության, սովետահայ դպրոցի, մանկավարժական կադրերի պատրաստման, անգրագիտության վերացման, սովետահայ ինտելիգենցիայի ձևավորման, գրականության, արվեստի, մասսաների մեջ կատարած քաղաքական-մասսայական աշխատանքի ողջ պրոցեսը։ Ընթերցողի առջև կենդանանում են հեղափոխական հերոիկայով հագեցված այն ժամանակները, որ Սովետական Ռուսաստանի օրինակով, հայ ժողովուրդը պայքարում էր ընդդեմ խավարի, հանուն լուսավոր և երջանիկ կյանքի։ Փաստական ուշագրավ նյութերի միջոցով ցույց է տրված լուսավորության առաջին ժողկոմների՝ Աշ. Հովհաննիսյանի, Պ. Մակինցյանի, Ա. Մռավյանի բեղմնավոր գործունեությունը, անվանի գիտնականներ Մ. Աբեղյանի, Գ. Ղափանցյանի, Հ. Մանանդյանի, Ս. Մալխասյանի, Հ. Գյուլիքևխյանի և այլոց ծառայությունները։ Ջերմ էջեր են նվիրված կուլտուր-լուսավորական աշխա-

տանքներին, հրատարակչական գործին, «կորչի՛ անգրագիտությունը» լոզունգի կենսագործմանը, բարձրագույն դպրոցի ձևավորմանը, գիտության, գրականության զարգացմանը։ 1920 թ. դեկտեմբերին Սովետական Հայաստանի կառավարության որոշմամբ հիմնադրված Երևանի պետական համալսարանը դարձավ կուլտուրայի և գիտության զարգացման խոշոր օջախ, հայ նոր ինտելիգենցիայի ձևավորման դարբնոց։ Եթե համալսարանն իր հիմնադրման ժամանակ ուներ 255 ուսանող, ապա տասը տարի անց, 1929—30 ուսումնական տարում, կար ավելի քան 1300 ուսանող։ Համալսարանի առաջին ռեկտորը բազմավաստակ պատմաբան Հ. Մանանդյանն էր։ Համալսարանում են դասախոսել Մ. Աբեղյանը, Գ. Ղարաջյանը (Ս. Տ. Արկոմեգ), Պ. Քալանթարյանը, Գ. Շիրմազանյանը, Գ. Էդիլյանը, Ա. Տերտերյանը, Հով. Հովհաննիսյանը (1922—1930 թթ. ռեկտորներ), Հ. Ջեբոտարյանը (Անժուր), Ա. Տեր-Մկրտչյանը, Ա. Տոնյանը, Հ. Նավակատիկյանը, Լ. Հովհաննիսյանը, Թ. Ավդալբեկյանը, Թ. Թորամանյանը, Ա. Մելիք-Ադամյանը, Հր. Աճառյանը, Հ. Ազատյանը, Աշ. Հովհաննիսյանը, Տ. Մուշեղյանը, Լ. Արիոյանը, Ա. Եղիազարյանը և տասնյակ ուրիշներ։ Հեղինակը վառ էջեր է նվիրել սովետահայ ինտելիգենցիայի ձևավորմանը, գիտական արժեքավոր ընդհանրացումներ կատարել։ Սովետահայ ինտելիգենցիայի կազմավորումը կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության արգասիքն է, հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերված հոգատարության արդյունքը։

Սովետական Հայաստանը մագնիսի նման դեպի իրեն էր ձգում իր զավակներին։ Կուլտուրական հեղափոխության առաջին տարիներին հայրենիք վերադարձան հայ ժողովրդի բազմաթիվ նշանավոր մտավորականներ, այդ թվում՝ Մարտիրոս Սարյանը (1921 թ.), Ալեքսանդր Թամանյանը (1923 թ.), Ալեքսանդր Սպենդիարյանը (1924 թ.), Ավետիք Իսահակյանը (1926 թ.) և ուրիշներ, որոնք լծվեցին կուլտուրական շինարարության վսեմ գործին։ Գրքում մեծ տեղ է տրված սովետահայ գրականության և արվեստի զարգացմանը. Հ. Թումանյանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի, Եղիշե Չարենցի, Ստեփան Զորյանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Գեղամ Սարյանի, Նայիրի Զարյանի, Մովսես Արազու, Հակոբ Հակոբյանի, Աքսել Բակունցի, Դերենիկ Դեմիրճյանի, Գևորգ Աբովի, Ազատ Վշտունու, Շուշանիկ Կուրղինյանի և այլոց ստեղծագործությունների վերլուծությանը, սովետահայ գրականությանը մատուցած նրանց ծառայությունների դրվատմանը։ Կ. Խուդավերդյանը բանիմացությամբ քննարկում է ժամանակի գրական շարժումները, արվեստի տարբեր ուղղությունները, սոցիալիստական ռեալիզմի հարցերը և հանգում ճիշտ եզրակացություններին։

Գրախոսվող աշխատության փաստալից բաժիններից է «Սովետական Հայաստանում կուլտուրական հեղափոխության վճռական հաջողությունները» գլուխը, որը միաժամանակ պարունակում է տեսական մի շարք ընդհանրացումներ և դիտողություններ։ Սովետական Հայաստանի տնտեսական նվաճումները, սոցիալական բարեփոխություններն իրենց բարերար ազդեցությունն ունեցան կուլտուրական շինարարության վրա։ Պատմական կարճ ժամանակամիջոցում լիովին կերպարանափոխվեց Հայաստանը, ագրարային հետամնաց երկրից այն վերածվեց ինդուստրիալ ագրարային երկրի։ Կուլտուրական հեղափոխության սոցիալիստական էտապի երկրորդ շրջանը Հայաստանում նշանավորվեց մասսայական անգրագիտության վերացմամբ, դպրոցա-

կան ցանցի ընդարձակմամբ, գիտական մտքի զարգացմամբ, հայ ժողովրդի նյութական-կենցաղային վիճակի արմատական բարելավմամբ։ Արդեն 1940—1941 ուսումնական տարում Հայաստանում կար 1155 միջնակարգ դպրոց, 11217 ուսուցիչներով և 326617 աշակերտներով։ Նույն ժամանակաշրջանում կար նաև 9 բարձրագույն դպրոց, 62 տեխնիկում, որտեղ սովորում էին ավելի քան 20.000 ուսանող։ Հեղինակը ցույց է տալիս, որ եթե 1897 թ. Հայաստանի քաղաքային բնակչության 38,9 տոկոսն էր գրագետ, ապա 1939 թ. այն հասավ 91,9 տոկոսի, իսկ գյուղական բնակչությունը համապատասխանաբար 5,7 տոկոսից հասավ 80,1 տոկոսի։ Սա անասելի կուլտուրական թռիչք էր, որ կատարվել էր մեծ հոկտեմբերի դրոշով։ Մենագրության մեջ օգտագործված վիճակագրական հարուստ տվյալները, աղյուսակները ավելի են խոսուն դարձնում և համոզիչ պատմում մեծ վերափոխությունների, հայ ժողովրդի մշակութային նվաճումների մասին։

Սովետական Հայաստանում կուլտուրական հեղափոխության առաջին էտապի գլխավոր հանրագումարը, ինչպես ճիշտ կերպով ընդգծել է հեղինակը,—դա սոցիալիստական հայ կուլտուրայի ստեղծումն է, որը խարսխված է հայ ժողովրդի դարավոր մշակույթի և ՍՍՌՄ եղբայրական ժողովուրդների, հատկապես ռուս մեծ ժողովրդի կուլտուրական նվաճումների փոխադարձ մերձեցման և հարստացման փորձի վրա։ Սոցիալիստական կուլտուրան դա ամբողջ ժողովրդի կուլտուրան է, այն ստեղծում է ժողովուրդը և լիովին ծառայում է ժողովրդին։ Սոցիալիստական կուլտուրայի հիմքը մարքսիզմ-լենինիզմն է, ամենահզոր և ճշմարտացի ուսմունքը։

Կ. Խուդավերդյանը իր աշխատության մեջ սոսկ չի նկարագրում փաստերը, այլ այն պատմական քննության է ենթարկում, բացահայտում կուլտուրական հեղափոխության իրականացման ճանապարհին եղած դժվարությունները, նրա օրինաչափություններն ու առանձնահատկությունները։ Կուլտուրական հեղափոխության՝ սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի բաղկացուցիչ մասի կարևորագույն օրինաչափությունը, դա նրա իսկական ժողովրդական բնույթն է։ Նոր, սոցիալիստական կուլտուրայի ստեղծողը՝ կոմունիզմ կառուցող ժողովուրդն է։

Հեղինակը անդրադառնալով Սովետական Հայաստանում կուլտուրական հեղափոխության առանձնահատկություններին, ուշագրավ փաստեր է բերում մայր հայրենիքի և սփյուռքահայության միջև եղած կապերի, հայ ժողովրդի կոնսոլիդացման գործում երկու հատվածների մշակութային մերձեցման և դրանում կուլտուրական հեղափոխության կատարած դերի վերաբերյալ։ Հենց սա էլ Հայաստանում կուլտուրական հեղափոխության առանձնահատկություններից մեկն է, որը բացահայտել է հեղինակը։

Գրախոսվող աշխատության վերջին էջերում անդրադառնալով Սովետական Հայաստանի և ժամանակակից սփյուռքահայ գաղթօջախների մշակութային կապերին, ցույց է տրված, որ կուլտուրական հեղափոխության հաջող իրականացման շնորհիվ Սովետական Հայաստանը դարձել է ամբողջ հայ ժողովրդի հոգևոր կյանքի ճանաչված կենտրոնը։ Հայ կուլտուրան սովետական իշխանության տարիներին աճել ու զարգացել է ժողովրդի դարավոր կուլտուրական ժառանգության, հոգևոր գանձերի, առաջադիմական, դեմոկրատական տրադիցիաների վրա։ Սովետական Հայաստանը կուլտուրայի, առաջավոր գիտության և գրականության երկիր է։ Բավական է նշել, որ 1964 թ. Սովետա-

կան Հայաստանում յուրաքանչյուր 10 հազար բնակչին ընկնում էր 2207 դպրոցական սովորող, դա ավելի շատ է, քան այնպիսի լուսավորյալ երկրներում, ինչպիսին՝ Ֆրանսիան (1655), Իտալիան՝ (1089), Անգլիան՝ (1615), էլ չենք խոսում հարևան կապիտալիստական Թուրքիայի (1126) և Իրանի (838) մասին։ Նույն թվականին Սովետական Հայաստանի 10 հազար բնակչից 140-ը սովորում էր բարձրագույն դպրոցում, այն ժամանակ, երբ Ֆրանսիայում՝ 55 էր, Իտալիայում՝ 39, Անգլիայում 44, Թուրքիայում՝ 25, իսկ Իրանում՝ 11։

Կուլտուրական մեծ հեղափոխության հաղթարշավը շարունակվում է կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում՝ կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման, գիտա-տեխնիկական առաջադիմության, նոր մարդու դաստիարակության համար։ Տվյալ ժամանակի առաջադիր խնդիրն է՝ ամբողջ բնակչությունը դաստիարակել գիտական կոմունիզմի ոգով, հասարակության բոլոր անդամների մեջ աշխատանքի նկատմամբ զարգացնել կոմունիստական վերաբերմունք, ապահովել կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսի, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և սովետական հայրենասիրության իրականացումը, մարդկային անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը, կապիտալիզմի մնացուկների հաղթահարումը մարդկանց գիտակցության մեջ և վարքագծում, բուրժուական գաղափարախոսության մերկացումը։

«Կուլտուրական հեղափոխությունը Սովետական Հայաստանում» մենագրությունը, որ գրված է տեսական-գիտական բարձր մակարդակով, իհարկե, զերծ չէ մասնակի թերություններից։ Նրանում կան փաստական առանձին անճշտություններ։ Այսպես, օրինակ, 36-րդ էջում նշված է, թե 1918 թ. հունիսի 22-ին լույս է տեսել հայկական գործերի կոմիսարիատի օրգան «Կոմունիստ» շաբաթաթերթի առաջին համարը, որը «...փաստորեն հանդիսացել է սովետական առաջին հայերեն թերթը»։ Այնինչ, սովետահայ առաջին թերթը Բաքվի հերոսական կոմունայի օրգան «Տեղեկատուն» է եղել, որի առաջին համարը լույս է տեսել 1918 թ. ապրիլի 3 (16-ին) Բաքվում։ 267—268-րդ էջերում հստակ չեն շարադրված հայ ժողովրդի կոնսոլիդացման վերաբերյալ մտքերը։ Հայ ժողովրդի «կոնսոլիդացման պրոցեսը սկսել է սովետական իշխանության առաջին իսկ օրերից» (էջ 268) արտահայտությունը, մեր կարծիքով, խմբագրման կարիք ունի, քանի որ կոնսոլիդացման պրոցեսը սկսել է ավելի շուտ, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո։ Գրքում քիչ տեղ է տրված Սովետական Հայաստանում ազգային փոքրամասնությունների մեջ կատարված աշխատանքին, մասսաների ինտերնացիոնալ դաստիարակությանը։ Բայց այս և նման կարգի թերություններն ու բանավիճային տեղերն երբեք ստվեր չեն նետում դրախոսվող աշխատության վրա։ Կ. Խուդավերդյանի մենագրությունը գրված է աղբյուրագիտական հարուստ բազայի վրա, աչքի է ընկնում իր գիտականությամբ, փաստական նյութի բանիմաց վերլուծությամբ, արժեքավոր ընդհանրացումներով, խիզախ հարցադրումներով և պրոբլեմի սպառիչ լուծմամբ։ Այն որոշակի ներդրում է սովետահայ պատմագրության մեջ։

Վերջում մեզ մնում է նշել, որ Կ. Խուդավերդյանի «Կուլտուրական հեղափոխությունը Սովետական Հայաստանում» մենագրությունը ձևավորված է ճաշակով, հրատարակվել է պոլիգրաֆիական բարձր մակարդակով, որը Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչության լավ աշխատանքի վկայությունն է։

Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ